# ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ԿՅԱՆՔՍ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ, ՀՈԳԻՍ՝ ԱՍՏԾՈՒՆ, ՊԱՏԻՎՍ՝ ԻՆՁ

Թիվ 1(16), 28 փետրվարի, 2019թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ


## ՎԱԼԵՐԻՅ ՕՍԻՊՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԵԹՅՈՒ ԹՈՐԻԳՅԱՆԻՆ

Հունվարի 30-ին ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն ընդունեց Կանադայի Օնտարիո նահանգի հանրային-համայնքային անվտանգության նախկին փոխնախարար, ներկայումս Տորոնտոյում գտնվող Մանքի համընդհանուր հարաբերությունների և հանրային քաղաքականության դպրոցի ոստիկանական նախաձեռնությունների ղեկավար, մեր հայրենակից Մեթյու Թորիգյանին: Հանդիպմանը ներկա էր նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանը:

Մեթյու Թորիգյանը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, ներկայացրեց տարբեր երկրների իրավապահ կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ իրենց ծրագրերն ու նախաձեռնությունները: Նախատեսվում է շուտով կյանքի կոչել հերթական այցելությունը, որին կմասնակցեն Հայաստանի իրավապահ կառույցների և ոստիկանության ծառայողներ: Ծրագիրը կոռուպցիայի դեմ պայքարն ավելի արդյունավետ դարձնելու և համայնքային ոստիկանության զարգացման նպատակներ է հետապնդում: Մեթյու Թորիգյանն ընդգծեց, որ ծրագիրը տարբեր երկրների իրավապահներին հնարավորություն է ընձեռում նաև փորձի փոխանակմամբ զարգացնել մասնագիտական գիտելիքները, որոնք վստահաբար կկիրառվեն գործնականում:

ՀՀ ոստիկանության պետը ոչ միայն համագործակցության, այլև աջակցության պատրաստակամություն հայտնեց: Վալերիյ Օսիպյանը հյուրին տեղեկացրեց, որ Հայաստանում համակարգային և տևական պայքար է սկսվել կոռուպցիոն երևույթների դեմ, ուստի անչափ կարևորում է կոռուպցիայի դեմ մասնագիտացված ու պրոֆեսիոնալ գործողությունները՝ հատուկ ընդգծելով, որ կոռուպցիային հակազդելը մերօրյա ոստիկանության գործունեության առաջնային ուղղություններից է: Հայաստանի ոստիկանության պետը Մեթյու Թորիգյանին ներկայացրեց նաև համայնքային ոստիկանության զարգացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները՝ կարևորելով թաղամասերում համայնքային ոստիկանության հենակետերի առկայությունն ու համայնքային ոստիկան և քաղաքացի կապի ամրապնդումը:

Հանդիպմանը քննարկվեցին առաջիկայում կազմակերպվելիք ծրագրերին, ինչպես և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող խնդիրներին առնչվող հարցեր:

## ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

2019թ. փետրվարի 6-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի նիստերի դահլիճում կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանի գլխավորությամբ տեղի ունեցավ կրթահամալիրի ստորաբաժանումների կողմից 2018թ. ընթացքում կատարված աշխատանքների ամփոփումը:

Զեկույցներով և համեմատական վերլուծություններով ելույթ ունեցան ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալներ, ոստիկանության գնդապետ Մ. Մուրադյանը և ոստիկանության փոխգնդապետ Գ. Առաքելյանը, կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գրիգորյանը, ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գևորգյանը, քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի պետ, ոստիկանության ավագ լեյտենանտ Վ. Սայադյանը, ուսումնական կենտրոնի պետ, ոստիկանության գնդապետ Ա. Սուքիասյանը, կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի պետ, ոստիկանության մայոր Ա. Մնացականյանը, ինչպես նաև կրթության որակի ապահովման բաժանմունքի պետ, ոստիկանության ավագ լեյտենանտ Տ. Խաչատրյանը:

Հանդիպումն ամփոփեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը՝ նշելով, որ ընդհանուր առմամբ գոհ է կատարված աշխատանքներից. «Ոգևորիչ է, որ այդ աշխատանքները գնահատելիս ոստիկանության ղեկավարությունն ավելի առատաձեռն է գտնվել՝ այն գնահատելով գերազանց: Սա ոչ թե իմ, այլ բոլորիդ և յուրաքանչյուրիդ աշխատանքի գնահատականն է»:

Այնուհետև կրթահամալիրի պետն ասաց, որ իր պաշտոնավարման վեց ամիսը շատ կարճ ժամանակահատված է, որպեսզի խոսվի ձեռնարկված միջոցառումների արդյունքների մասին. «Հասկանալի է, որ ավելի երկար ժամանակ է պահանջվելու ուսումնական պրոցեսում կատարած որևէ քայլի, բարեփոխման արդյունավետությունը գնահատելու համար: Այստեղ շատ կարևոր է սկզբունքայնությունը, համառությունն ու համբերատարությունը: Վստահ եմ, որ մեր ձեռնարկած քայլերն անպայման տալու են իրենց արդյունքները»:

-Ամբողջ կրթահամալիրը մեկ թիմ է, և մենք նախանշված խնդիրներն անպայման իրականացնելու ենք. կրթահամալիրի հեղինակությունը, ուսման որակը բարձրացնելու ենք ընդունելության, ընթացիկ և ավարտական քննությունների օբյեկտիվության ապահովմամբ, կրթահամալիրի հրաշալի պրոֆեսիոնալ դասախոսական կազմի նվիրական աշխատանքի միջոցով: Վստահ եմ, որ բոլորդ էլ ինձ հետ եք, ինձ պես պատրաստ եք առավելագույն ջանքերը ներդնելու՝ ավելի լավ բուհ ունենալու համար, - ընդգծեց կրթահամալիրի պետը՝ հավելելով,- ձեռքբերումներին զուգահեռ, այդուհանդերձ, եղել են նաև բացթողումներ, թերություններ, որոնց մասին հենց մենք պետք է առաջինը խոսենք, օբյեկտիվորեն ընդունենք և ձգտենք դրանց վերացմանը»:

Մ. Բաբայանը հակիրճ անդրադարձավ նաև բուհի հաջողություններին՝ մասնավորապես մատնանշելով, որ «Օրենքի պատվար» ամսագիրն ընդգրկվել է ԲՈՀ-ի նախընտրելիների ցուցակում, կրթահամալիրի ներկայացրած հավատարմագրման հայտն ընդունվել է լիազոր մարմնի կողմից: Նա նաև որպես օրինակելի որակեց քոլեջի լեզուների ամբիոնի դոցենտ, ոստիկանության գնդապետ Ռ. Մուսայելյանի կողմից հայոց լեզու առարկայի առաջադիմությունը բարելավելու նպատակով իրականացման լրացուցիչ դասընթացների արդյունավետությունը, Ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Մ. Մարկոսյանի և այլոց ծանրաբեռնված ու նվիրված գիտամանկավարժական, ուսումնաօժանդակ գործունեությունը:

Հանդիպման ավարտին կրթահամալիրի պետը շնորհակալություն հայտնեց համատեղ արդյունավետ աշխատանքի համար՝ բոլորին մաղթելով ուժ, եռանդ, իմաստություն և համբերություն 2019թ. խնդիրները հաջողությամբ իրագործելու նպատակով:

## «ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ» ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐԸ ՀՀ ԲՈԿ-Ի ԸՆԴՈՒՆԵԼԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ

2016թվականի մարտի 25-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի գիտամեթոդական ամսագրի հիմնադրման, հրատարակման աշխատանքների կարգը և խմբագրական խորհրդի կազմը հաստատելու վերաբերյալ» թիվ 137-Ա հրամանով ՀՀ ոստիկանության կրթահամալիրում հիմնադրվեց «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիրը:

Ամսագրի 3 տարվա գործունեության ընթացքում հրապարակվել է 6 համար, որտեղ ընդգրկվել են 37 հայրենական և 75 արտասահմանյան հեղինակների մոտ 88 գիտական հոդվածներ:

Երեք տարիների ընթացքում ամսագիրը հնարավորինս իրականացրեց դեռևս հիմնադրման ժամանակ իր առջև դրված նպատակները, մասնավորապես դարձավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և գիտությամբ զբաղվող ուսանողների, ինչպես նաև ասպիրանտների կողմից գիտական գործունեությունը խթանելու լավագույն միջոցներից մեկը: Այն ավելի նպաստեց արտասահմանյան երկրների ոստումնական հաստատությունների հետ գիտահետազոտական ոլորտում իրականացվող համագործակցությանը: Ամսագիրն այսօր ստացել է միջազգային լայն ճանաչում, ինչի վառ ապացույցը նրա 6 համարներում ընդգրկված՝ արտասահմանյան մեր շատ գործընկերների գիտական հոդվածներն են:

Վերջին ամիսներին կատարված աշխատանքների արժանի գնահատականն այն է, որ «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիրը 2018 թվականի դեկտեմբերին ընդգրկվեց ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ ԿԳՆ բարձրագույն որակավորման կոմիտեի համար ընդունելի գիտական հրատարակությունների ցանկում:

**Տիգրան Եսայան**
*կրթահամալիրի պետի առաջին տեղակալ,*
*ոստիկանության գնդապետ, ի.գ.թ, «Օրենքի պատվար»*
*գիտամեթոդական ամսագրի գլխավոր խմբագիր*

## ՌՈՒՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Հայաստանում փետրվարի 19-ը գիրք նվիրելու համազգային օր է: Այս տարի այդ նշանակալից օրը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հյուրերն էին Երևանում ռուսական գիտության և մշակույթի կենտրոնի փոխտնօրեն Ա. Ի. Բեչենովը և ռուսաց լեզվի բաժնի առաջատար մասնագետ Վ. Ձ. Գրիգորյանը, որոնք ուսումնական հաստատությանը նվիրեցին ռուսերենով հրատարակված ուսումնամեթոդական գրականություն:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանն իր ողջույնի խոսքում նշեց, որ մենք այս օրը նշում ենք մեծանուն հայ գրող և բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան տարեդարձը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին հետագա համագործակցության հեռանկարների, ռուսաց լեզու առարկայի լրացուցիչ պարապմունքների անցկացման վերաբերյալ հարցեր:

Կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Տ. Մ. Եսայանը նշեց, որ արդիական հարցերից է նաև մեր ուսումնական հաստատությանը տրամադրվող անհրաժեշտ մասնագիտական իրավաբանական գրականությունը:

Գեներալ-մայոր Մ. Բաբայանը հյուրերին նվիրեց իր հեղինակած գրքերը, ինչպես նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի դասախոսների հեղինակած դասագրքերը:

# ԵՐԴՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Ոստիկանի մասնագիտությունը մարդասեր և մարդակենտրոն առաքելություն է, այն որքան բարդ, պատասխանատու, դժվար, նույնքան պատվաբեր և ազգանվեր է: Ոստիկան լինելը միայն մասնագիտություն չէ կամ լոկ համազգեստ կրել, այն կյանքի անբաժան առօրյա է, ապրելակերպ, որին պետք է նվիրվել անմնացորդ, ինչպես նվիրվում են հայրենիքին, ծնողին, զավակին, սիրելիին:

Սերնդափոխությունը մշտական բնույթ ունի այս ոլորտում. նորերը գալիս են՝ հներին փոխարինելու, նրանց ստեղծած լավագույնը պահպանելու և ավելի կատարելագործելու ձգտումներով: Ոստիկանության դարբնոցում՝ ոստիկանության կրթահամալիրում, իրենց տեսական գիտելիքներով և ավագներից լսած կենսափորձով են զինվում մեր առաջին քայլեր կատարողները: Սկսնակ ոստիկանի առաջին քայլը երդման արարողությունն է, որը կյանքում մեկ անգամ, բայց ամբողջ կյանքի համար է: Երդումն առ հայրենիք, երդումն առ սեփական ժողովուրդ, երդում, որ սկսվում է հենց իրենից և իր ընտանիքից: Արդար, անկողմնակալ, նվիրյալ ծառայող լինելը մեծագույն պարգև է, որին հասնելու տենչը բոլորիս ներսում է: Այսպիսի մի նոր սերնդի մուտքով սկսվեց 2019 թվականը, ովքեր համալրվեցին ոստիկանական մեծ ընտանիքի շարքերը:

Հունվարի 22-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տեղի ունեցավ ուսումնական կենտրոնի սովորողների՝ ոստիկանության ծառայողի երդման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը, աշխատակազմը, ծառայողները և սովորողների հարազատները: Երեսունվեց ծառայող երդվեց անձնվիրաբար ծառայել հայրենիքին, ժողովրդին և համալրեց ոստիկանական մեծ ընտանիքի շարքերը: Երդման արարողակարգն անցկացրեց և կրթահամալիրի պետին զեկուցեց ծառայության գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Գալոյանը:

ՀՀ պետական օրհներգով և նորանշանակ ոստիկաններին շարային երթով եզրափակվեց հանդիսավոր արարողությունը: Ոստիկանության ծառայողի երդման հանդիսավոր արարողության ավարտով նոր սկիզբ դրվեց նրանց հետագա ծառայությանը:

Կրթահամալիրի պետը շնորհավորեց նորանշանակ ծառայողներին և կանաչ ճանապարհ մաղթեց նրանց:

Հուսանք, որ նրանց հետագա ուղին կլինի փառահեղ, լուսավոր և անփորձանք:

Բարի գալուստ ՀՀ ոստիկանություն...

**Լիանա Խրշոյան**
***ծառայության բաժնի կրտսեր տեսուչ, ոստիկանության ավագ սերժանտ***

# ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՆՇՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ

Փետրվարի 19-ին հայ ժողովուրդը տոնեց ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150–ամյակը:

Թումանյանական տարվա մեկնարկը երևանյան թանգարանում ազդարարվեց շեփորների ուղեկցությամբ ու ասմունքով:

Առավոտվանից արդեն մարդաշատ էր մեծ բանաստեղծի մայրաքաղաքում գտնվող տուն-թանգարանը: Բակում հավաքվել էին թումանյանասերները, իսկ ներսում հետաքրքիր կենդանի ցուցադրություններ ու մինի ներկայացումներ էին բեմադրվել երեխաների ու մեծերի համար՝ «Քաջ Նազար», «Անհաղթ աքլոր», «Անուշ», իսկ երկրորդ հարկում բոլորին «դիմավորեցին» Թումանյանն ու նրա բարեկամները՝ Հանս Քրիստիան Անդերսենը, Ալեքսանդր Պուշկինը, Գրիմ եղբայրներն ու Աստրիդ Լինգրենը:

Այս հոբելյանին ամենատարբեր նախաձեռնություններով հատուկ նախապատրաստվել էին թե՛ մայրաքաղաքի, թե՛ մարզերի բոլոր նախադպրոցական հաստատությունները, դպրոցները, գրադարաններն ու թանգարանները:

Հիշեցնենք, որ դեռ տարիներ առաջ մեծ բանաստեղծի օրը Հայաստանի գրողների միության կողմից հայտարարվեց գիրք նվիրելու օր:

Այդ օրն առավոտվանից մարդաշատ էր նաև բանաստեղծի ծննդավայրը՝ Դսեղը: Բանաստեղծի տուն-թանգարանը վաղուց ուխտատեղի է դարձել յուրաքանչյուր հայ մարդու համար:

Իսկ Թբիլիսիում գտնվող նրա տունը, որտեղ բանաստեղծն ապրել է իր բազմանդամ ընտանիքով, և որն այժմ հայկական մշակույթի կենտրոնն է, նույնպես անմասն չի մնացել հոբելյանական նախաձեռնություններից: Թբիլիսիի հայ գրողներն ու հասարակական գործիչները Հայաստանից ժամանած պատվիրակության հետ իրենց հարգանքի տուրքն են մատուցել մեծ գրողի հիշատակին՝ ծաղիկներ խոնարհելով Խոջիվանքում գտնող՝ Հովհաննես Թումանյանի շիրիմին: Իսկ երեկոյան Վրաստանի Խորհրդարանի ազգային գրադարանում տեղի է ունեցել գրական-գեղարվեստական երեկո «Թումանյանը մեզ հետ է» խորագրի ներքո՝ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական դրամատիկական թատրոնի, Վիրահայոց թեմի «Մակար Եկմալյան» հոգևոր երգչախմբի և մենակատարների մասնակցությամբ:

# ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Զգալի առաջընթաց է գրանցվել ՀՀ ոստիկանության կրթահամալիրում գիտական գործունեության բարելավման ուղղությամբ, որի գրավականը պարբերաբար կատարվող գիտական աշխատանքներն են:

Վերջերս հրատարակվեցին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ոստիկանության փոխգնդապետ Ռ. Մարանդյանի՝ «Հանրաքվեն որպես ժողովրդաիշխանության իրացման ձև Հայաստանի Հանրապետությունում» խորագրով մենագրությունը, իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ոստիկանության փոխգնդապետ

Ա. Մելիքսեթյանի՝ «ՀՀ գործող քրեական օրենսգրքի և ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի որոշ դրույթների իրավահամեմատական վերլուծություն» վերտառությամբ գիտական հոդվածների ժողովածուն, իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության կապիտան Ա. Ղազարյանի՝ «Մինչդատական վարույթի կազմակերպման մոդելները (պատմական և համեմատաիրավական վերլուծություն)» խորագրով մենագրությունը, լեզուների ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության մայոր Գալինա Ռուսակովայի «Русский язык» ուսումնագործնական ձեռնարկի առաջին մասը: Հրապարակված գիտական աշխատանքները կարող են օգտակար լինել ինչպես ուսումնական գործընթացում, այնպես էլ իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության սուբյեկտներին աջակցության տեսանկյունից:

# ՄԵՐ ԱՍՏՎԱԾԱՊԱՐԳԵՎ ՄԱՅՐԵՆԻԻ ՆՎԻՐՅԱԼ ՏԵՐԸ ԼԻՆԵՆՔ

Մեր պետական լեզուն հայերենն է. արժևորենք մեր մայրենիի իմացության կարևորությունը և մեր հարազատ լեզուն լավ իմանանք ոչ միայն անհրաժեշտությունից ելնելով, այլ նաև հայի ինքնությունը խորհրդանշող նվիրական սրբությունը գնահատելով:

Մեր ժողովրդի դարավոր պատմությունը լավագույնս հաստատել է հայոց սրբությունների՝ հայրենիքի, մայրենի լեզվի և սրբություն սրբոց հավատի եռամիասնության պատվական և կենսահաստատ լինելը:

Աշխարհում գոյություն ունեցող շուրջ 2000 լեզուների շարքում մեր մայրենին իր փառահեղ տեղն ու դիրքն ունի: Այն աշխարհի ամենաճոխ լեզուներից է:

Լեզվի լավագույն բանաձևն է տալիս մեծն Թումանյանը: Մեր իմաստուն բանաստեղծը հրաշալի գիտակցում էր լեզվի կախարդական ճախրանքի զորությունը. «Լեզուն է ամեն մի ժողովրդի գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնության ու հանճարի խոշորագույն դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը»:

Հայերենը երկարատև զարգացման ուղի է անցել և 5-րդ դարում (405թ.)՝ գրերի գյուտից հետո, ամրագրվել ու ավանդվել է ապագա սերունդներին:

Գրերի գյուտից հետո հայագիր գրականությունը, ի հեճուկս նվաստ թշնամու՝ այն երկրի երեսից իսպառ ոչնչացնելու անխոնջ ջանքերի, զարգանում և վերընթաց է ապրում՝ երկնելով բարձրարժեք ստեղծագործություններ:

Մեծն Պարույր Սևակի խոսքերով ասված՝ մեր մեծ երթի գավազանակիր և մեր պատմության մեծագույն դիվան, մեր ազնվության գովասանագիր, մեր մտքի պահեստ, հոգու օթևանն ու աստվածատուր գիրն ավելի քան 16-դարյա պատմություն ունի:

Շատ բան է խլել մեզնից թշնամին՝ բարդելով վերքին վերք ու անարգանք, կտրել է նաև արմատից լեզուն, բայց նա հառնել է փյունիկի նման ու դարձել դարերի պատմության խոսուն վկան:

Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի շնորհիվ փառահեղ թարգմանված Աստվածաշունչն իր լեզվական շքեղությամբ, հավատարիմ բնագրին, ամեն մի խոսքի ու բառի անխաթար մոտեցմամբ իրավամբ համարվում է թարգմանությունների «թագուհի»: Բոլոր լեզուներով այն «Բիբլիա» է, իսկ մեր թարգմանությամբ՝ Աստծո շունչ:

Որքան էլ դրվատենք մեզ պարգևած սրբությունները, միևնույն է, անչափ նվազ են դրանց բնորոշող ստորոգելիները:

Համայն հայությանն ուղղված մեր նախնյաց սուրբ խրատն է եղել հայոց խոսքը հնչեցնել այնքան անաղարտ ու անկեղծ, ինչպես խտացյալ աղոթք, իսկ այսօր արդյոք մեր նախնյաց պատգամներին արժանի՞ ժառանգորդներ ենք, արդյոք ազգային ինքնագիտակցությա՞մբ ենք մեր մայր լեզվին, մեր ինքնությանը վերաբերվում:

Ժողովրդի գոյատևման և միասնականության կարևորագույն հիմքերից է լեզուն, որի կորուստը կարող է նշանակել այդ ժողովրդի անհետացում, և որի երկփեղկումը ժամանակի ընթացքում կարող է ի վերջո հանգեցնել ժողովրդի երկփեղկման. մարդկության պատմությունը նման բազում օրինակներ է տվել:

Հայոց լեզուն հայապահպանության գլխավոր զենքն է, մեր գոյության հիմնասյունը, ազգային միաբանության կարևոր առհավատչյան, համազգային, համապետական արժեք, ուստի նրա նկատմամբ անհրաժեշտ է հատուկ հոգացողություն, որը պետք է արտահայտվի բոլորիս ջանքերի արդյունավետ ու շահագրգիռ համադրմամբ: Վաստակածի իրավունքով տեր լինենք մեզ վերապահված ժառանգություններին և նվիրյալ ծառայությամբ լծվենք այդ վեհ գործին:

Մեզանից յուրաքանչյուրը մայրենին անաղարտ պահելու պատասխանատվություն պետք է կրի: Այսօր մտահոգիչ է մեր խոսակցական հայերենը, որը հեղեղված է անհարկի օտարաբանություններով, ժարգոնային անհեթեթ արտահայտություններով, լեզվական սխալներով ու աղճատումներով, որոնք հաճախ ներթափանցում են գրական լեզվի ոլորտ:

Իրավամբ, հայոց լեզուն ու գիրն է մեր ինքնության ու հաղթանակների պահապանը: Աշխարհում շուրջ հինը միլիոն հայ է ապրում, որոնց կեսը հայախոս չէ, ուրեմն դատապարտված է ձուլման, որովհետև հային լեզուն է հայ պահում, մնացածն ածանցյալ է: Մեր աղոթքի լեզուն՝ գրաբարը, իր երգեցիկ շարականներով մինչ օրս հնչում է սուրբ տաճարներում: Լինենք արժանի ժառանգորդը մեր աղոթքի լեզվին, միահամուռ հավաքական ուժով պահպանենք մեր լեզուն, մեր թանկարժեք կարողությունը: Խոսենք ու գրենք մաքուր, անաղարտ հայերենով:

**Աննա Սարուխանյան**
***տնտեսական բաժնի ակումբի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ***

## ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԸ ՀԱՐԹԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Ժողովուրդների կյանքում լինում են իրադարձություններ, որոնք կանխորոշում են նրանց հետագա ճակատագիրը: Այսպիսի մեծ ու կարևոր իրադարձություն էր հայկական բանակի ստեղծումը: Արյան կանչով, ինքնապաշտպանական բնազդով ձևավորվեց մեր բանակը: Ստեղծվեց, բազում փորձությունների ենթարկվեց, թրծվեց, կոփվեց, ամրացավ և հրաշքներ գործեց մեր գոյատևումն ապահովելու համար՝ դառնալով Արցախյան ազատամարտի փառապանծ հաղթանակի երաշխավորը: Մեր ազգային բանակը հարթեց անկախության ճանապարհը, ամրապնդեց ու իրականություն դարձրեց ազատ ու անկախ Հայաստան ունենալու մասին մեր երազանքը: Բանակը ծնվեց մեր ցավից, մեր սիրուց, մեր խիզախությունից, մեր հաստատակամությունից ու ինքնանվիրումից: Բանակ կերտելու մեր կորստաշատ ուղին Եռաբլուրով անցավ: Հրադադարի հետ հանուն խաղաղության պայքարը չավարտվեց: Անկախությունն ու խաղաղությունը մշտապես պաշտպանության կարիք ունեն: Հայոց աշխարհի փխրուն խաղաղության պաշտպանն այսօր էլ հայոց բանակն է: Հայոց բանակն է մեր պետականության հարատևման, անկախության պահպանման, ժողովրդի ազատ, ինքնիշխան հավերժումի ամուր և հուսալի երաշխավորը. ապացույցը՝ 2016 թվականը:

Մեր հաղթական բանակի օրը մեծ տոն է և առիթ՝ հիշելու նրանց, ովքեր ապրիլին Արցախի սահմանների պաշտպանությունը կազմակերպեցին և իրականացրին անհավանական թվացող ճիգերի գնով, իսկ հարկ եղած դեպքում՝ նաև կյանքի գնով: Մեր երիտասարդ զինվորներն ու հրամանատարները դարձան օրինակ ու չափանիշ հետագա սերունդների համար, ինչպես նրանց համար օրինակ ու չափանիշ էին եղել իրենց հայրերն ու պապերն արցախյան առաջին պատերազմի օրերին:

Այսօր բանակը թևակոխել է զարգացման նոր փուլ: Ազգ-բանակ հայեցակարգն ուժեղ, պաշտպանունակ, բարոյական, ոգեղեն, ազգի վստահությունը, սերն ու աջակցությունը վայելող բանակ կերտելու ծրագիր է:

Թեև զինվորական մասնագիտությունը համարվում է տղամարդու գործ, սակայն այսօր հայ աղջիկները ևս շարքերում են՝ որպես բժիշկ ու բուժքույր, որպես դիպուկահար ու հրետանավոր, որպես կապավոր ու հրաձիգ: Խիստ ընտրություն անցած, ֆիզիկական և հոգեբանական փորձությունները հաղթահարած, մասնագիտական ունակություններ ձեռք բերած կին զինծառայողները պատրաստ են կատարելու իրենց առջև դրված խնդիրները բարձր մակարդակով: Նրանք զինվորական համազգեստը հպարտությամբ են կրում:

Շնորհավորում եմ բոլորիս այս պանծալի տոնի առթիվ: Մենք վստահ նայում ենք վաղվան, որովհետև ունենք հուսալի պաշտպան՝ ի դեմս հայկական բանակի:

Մաղթում եմ բոլորիս խաղաղություն:

**Սառա Մխիթարյան**
***Ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան***

# ԿԱՆԱՅՔ, ՈՐՈՆՔ ՓՈԽԵՑԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայ կնոջ ավանդական նուրբ ու հեզ կերպարը պատմական բազմաթիվ դրվագներում ակներև զուգակցվել է հայ կնոջ մեկ այլ՝ խիզախ և քաջ կերպարի հետ: Այդ զուգակցումների ակնհայտ դրսևորումները նկատելի են նաև ժողովրդական բանահյուսության մեջ, ինչպես «Անահիտ» հեքիաթում հայ կինը ներկայացնում է ոչ միայն որպես գեղեցիկ և աշխատասեր տնային տնտեսուհի, այլև ոգեշնչում ու առաջնորդում է մի ողջ զորքի. «Քաջարի օրիորդներն ու տիկիններն էլ, երբ որ իմացան, թե թագուհին պիտի առաջնորդի զորքին, նմանապես զրահավորվեցին ու ձիավորվելով շրջապատեցին թագուհուն»:

1845 թվականին Նյու Յորքի երկու բանտերում երկու կին ընդունվել էին աշխատանքի որպես վերակացուներ:

Ռուսական Կայսրությունում 1887 թվականին բանտերում ստեղծվեցին կանանց բաժիններ, հսկիչ-կանանց և կին բանտարկյալներին վերահսկող կանանց պաշտոններ:

Առաջին կինը, որ ոստիկանությունում ծառայության ընդունվեց, Մարիա Օուենսն էր: Նա 1893 թվականին Չիկագոյի ոստիկանության դեպարտամենտում ստացավ ոստիկանի պաշտոն և կոչում: Այդ պաշտոնը նրան տրվեց որպես յուրատեսակ փոխհատուցում զոհված ոստիկան ամուսնուն՝ կերակրողին, կորցնելու դիմաց: Այն ժամանակ ծառայողական պարտքը կատարելիս զոհված ոստիկանների ընտանիքներին կենսաթոշակ չէր հատկացվում, և այդ կերպ Չիկագոյի ոստիկանական գերատեսչությունը ցանկանում էր նեցուկ լինել զոհվածների ընտանիքներին: Մարիա Օուենսը դարձավ պատմության մեջ ոստիկանության առաջին կին սպան և երեսուն տարի ծառայեց Չիկագոյի ոստիկանության դեպարտամենտում:

Անգլիայում ևս յուրահատուկ եղավ ոստիկանության ծառայությունում կանանց ներգրավումը: Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, երկրի քաղաքների մեծ մասում նորակոչիկների պատրաստման համար Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից ստեղծվեցին ճամբարներ: Այս հանգամանքը հարուցեց կանանց նկատմամբ խտրականության դեմ պայքարող շարժում, որի պահանջով մարմնավաճառությանն ու կավատությանը դիմագրավելու նպատակով ստեղծվեցին կանանց պարեկային ծառայություններ այն վայրերում, որտեղ զինվորների հավաքատեղիներն էին: Այսպես, 1915 թվականին Լոնդոնի արվարձաններում հայտնվեցին կանանց կամավորական ոստիկանության պարեկները, որոնց ղեկավարում էին Մարգարիտ Դուսոն Դամիրը և Նինա Բոյլը: Ընդ որում, կին ոստիկաններն աշխատում էին բացարձակապես անվճար: Արդեն 1918 թվականին կանանց ոստիկանական պարեկությունները գործում էին Մեծ Բրիտանիայի բոլոր քաղաքներում: Այդուհանդերձ, կին ոստիկանների մեծ մասը՝ որպես ոստիկանության լիիրավ աշխատակից, երդմնակալություն չէր անցնում և չէր կարող իրավախախտների ձերբակալություն իրականացնել:

Պատերազմի ավարտին Մեծ Բրիտանիայում արդեն կային ոստիկանական ծառայության 357 աշխատակցուհիներ: Մարգարիտ Դուսոնը դիմեց ոստիկանության գլխավոր կոմիսարին՝ խնդրելով նրանց ծառայության ընդունել ոստիկանական գերատեսչություն, սակայն մերժում ստացավ, քանի որ ոստիկանական իշխանությունները զգուշանում էին կրթված կանանցից, որոնց մեծ մասը համալսարանական կրթություն ուներ: Շուտով, որպես փորձարկում, Լոնդոնի ոստիկանական իշխանությունները մեկ տարի տևողությամբ պայմանագրեր կնքեցին երեք կանանց հետ: Վերջիններս ծառայության ընդունվեցին ոստիկանության համակարգում և ստացան սերժանտի կոչում, թեև սահմանափակ լիազորություններով և առանց ձերբակալություն իրականացնելու իրավունքի: Փորձարկումը դրական գնահատվեց: Արդեն 1923 թվականին Լոնդոնում կին ոստիկանների թիվը մեծացավ ու հասավ 50-ի: Իսկ 1928 թվականին որոշում կայացվեց ոստիկանությունում կանանց թիվը 100-ի հասցնելու մասին:

Ռուսական Կայսրության ոստիկանությունում կանանց ծառայության վերցնել թույլատրվեց 1916 թվականին՝ նախարարների խորհրդի «Միապետության 50 նահանգներում ոստիկանության ուժեղացման և ոստիկանության պաշտոնյաների ծառայողական ու նյութական պայմանների բարելավման մասին» որոշմամբ: Կանանց սկսեցին ընդունել այնպիսի աշխատանքի, որը կապված չլիներ գաղտնի փաստաթղթերի հասանելիության հետ, իսկ պաշտոնները պետք է բարձր չլիներ:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո նոր իշխանությունները, հասկանալով երկրում հասարակական կարգը պահպանելու կարևորությունը, ստեղծեցին նոր՝ խորհրդային միլիցիա: Եվ քանի որ հաղթանակած հեղափոխությունը հայտարարել էր համընդհանուր հավասարության մասին, ապա իրավապահ մարմիններում կանանց ծառայության ընդունելը տեսականորեն ոչնչով սահմանափակված չէր: Գործնականում վիճակը մի փոքր այլ էր: Կանանց ծառայության էին ընդունում միլիցիա միայն այն դեպքում, երբ հնարավոր չէր լինում հաստիքները տղամարդկանցով լրացնել: Ընդունելությունը կատարվում էր ընդհանուր հիմունքներով, իսկ ընդունվածներին հիմնականում ուղարկում էին ֆաբրիկաներ ու գործարաններ:

Միայն հազվադեպ էր կանանց վստահվում պահակային ծառայության իրականացումը: Այս իրավիճակը փոխվեց միայն Հայրենական մեծ պատերազմի սկզբին, երբ կանայք փոխարինեցին ռազմաճակատ մեկնած միլիցիոներ տղամարդկանց: Պատերազմի ավարտին խորհրդային միլիցիայում արդեն ծառայում էր շուրջ 20000 կին, ընդ որում, ավելի քան հինգ հազարը՝ քրեական հետախուզությունում, իսկ մոտ հինգ հարյուրը տեղամասային տեսուչներ էին:

Վերադառնանք Հայաստան. 21-րդ դար. կանայք ոստիկանությունում աշխատում են տղամարդկանց հավասար, բայց և այնպես, հայ հասարակությունն այսօր ժողովրդավարացման գործընթացներում կանանց ռեսուրսն արդյունավետ օգտագործելու, ներուժային հնարավորությունները հատկապես քաղաքականության բնագավառում բացահայտելու կարիք ունի:

Գուցե կանա՞յք իրենց առաջադրած լուծումներով կարողանան պատասխան տալ մարդկության առաջ ծառացած բազում հիմնախնդիրներին...

Վերջում մեջ բերենք ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նախկին ղեկավար Տեռ-Բեն Գուրիրաբի մի առիթով արտահայտած միտքը. «Մենք պետք է հարց տանք մեզ. կարո՞ղ ենք մեզ թույլ տալ անտեսել կնոջ ձայնը, հնարավոր է, որ կանանց առաջարկած լուծումներն այն են, ինչ աշխարհը փնտրում է»: Սա, իսկապես, նշանակում է, որ առաջադեմ աշխարհում կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցությունը դարձել է ժողովրդավարության կայացման էական գործոն:

**Մարիետա Խերանյան**
***գիտական աշխատանքների բաժնի գիտաշխատող, ոստիկանության ավագ լեյտենանտ***
**Լուսինե Սարդարյան**
***ՕՀԳ և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս, ոստիկանության մայոր***

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԵԿՆԱՐԿ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների կազմն ուսումնասիրելիս պարզվում է, որ նրանք իրենց գրեթե ամբողջ ռեսուրսներն օգտագործում են ամբողջական ծրագրով ուսուցման համար: Այդ ուսուցման սահմանները շատ որոշակի են: Բոլոր սովորել ցանկացողները տվյալ որակավորման համար սահմանված ուսումնական ծրագիրն անցնում են սկզբից մինչև վերջ և ստանում համապատասխան որակավորում: Մոդուլային ուսումնական ծրագրերի կիրառումը բավականին հեշտացնում է ամբողջ գործընթացը, վերացնում է շատ հիմնախնդիրներ, ամբողջական և մասնակի ուսումնական ծրագրերը բերում է մեկ միասնական հիմքի, ապահովում որակավորման և նրա մասնակի տարրերի ձևավորման միասնականությունը:

Վերոհիշյալ խնդիրների և հատկապես մոդուլային ուսուցման ներդրման և զարգացման վերաբերյալ 2019թ. հունվարի 23-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում անցկացվեց մոդուլային

ուսումնական ծրագրերով ուսուցման կազմակերպման վերաբերյալ մեթոդական վերապատրաստման դասընթացի առաջին դասախոսությունը, որը վարում էր կրթության ազգային ինստիտուտի մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) տնօրենի տեղակալ Աշոտ Սահիրդյանը: Հանդիպումը կազմակերպել էր կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչությունը:

Ա. Սահիրդյանը կրթահամալիրի անձնակազմին ծանոթացրեց իրենց կենտրոնի առաքելությանն ու գործունեությանը՝ նշելով, որ ՄԿՈՒԶԱԿ-ը զբաղված է կրթության ոլորտում բարեփոխումների մեթոդական սպասարկման հարցերով, և կենտրոնի առանցքային խնդիրներից են նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության բնագավառում կրթական չափորոշիչների, դրանց համապատասխան ուսումնական պլանների և մոդուլային ուսումնական ծրագրերի մշակումը, վերապատրաստման ծրագրերի կազմակերպումը և կրթական բարեփոխումների արդյունքների գնահատումը:

Բանախոսը հանգամանալից ներկայացրեց մոդուլային ուսումնական ծրագրերով ուսուցման կազմակերպման ու իրականացման, ինչպես նաև ուսումնական արդյունքների գնահատման առանձնահատկությունները նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում: Մասնավորապես ներկաների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքին, որ ուսուցման արդյունքում կարևոր է ստուգել ոչ թե սովորողների գիտելիքների մակարդակը, այլ այն, թե կկարողանա՞ն արդյոք նրանք կիրառել այդ գիտելիքներն իրենց մասնագիտական գործունեության մեջ:

Բանախոսն անդրադարձ կատարեց նաև մասնագիտական կրթական չափորոշիչների կարևորությանը. «Հայաստանում մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) համակարգում իրականացվող բարեփոխումների աշխատանքների մի խումբն ուղղված է կարողությունների ձևավորմանը միտված ուսուցման և ուսումնառության իրականացմանը: Դրա համար առաջին հերթին մշակվել և համակարգում ներդրվել են կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչներ՝ ըստ ՄԿՈՒ համակարգի մասնագիտությունների և որակավորումների:

Մասնագիտական կարողությունների տարրերը պետական կրթական չափորոշիչներում ներկայացված են կարողության մոդուլների տեսքով, ընդ որում, որևէ մոդուլում նկարագրված կարողությունը տրված է ուսումնառության արդյունքների և յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների տեսքով»:

Հանդիպման ընթացքում Ա. Սահիրդյանը սիրով պատասխանեց իրեն ուղղված բոլոր հարցերին:

Ներկայացվեցին տարբեր տեսակետներ: Հանդիպումն անցավ ակտիվ քննարկումների մթնոլորտում:

# ԵՐԵԽԱՆԵՐԸ ՎԱՂՎԱ ԱՌՈՂՋ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՋԻՋՆԵՐՆ ԵՆ

«Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների պրոֆիլակտիկա» առարկան ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ՕՀԳ և կրիմինալիստիկայի ամբիոնի կողմից դասավանդվող կարևոր առարկաներից է: Վերջինիս խնդիրը երեխաներն են, որոնք, լինելով երկրի առաջընթացի, վաղվա առողջ, ճշմարիտ արժեհամակարգ կրող հասարակության բջիջները, դառնալու են պետության հենասյուները: Այսօր նրանք կարիք ունեն հոգածության, իրենց իրավունքների պաշտպանության, ինչը որոշ դեպքերում խաթարվում է տարբեր պատճառներով և դրդում նրանց բացասական ազդեցությունների, վատ միջավայրի տիրույթ, որն էլ ապագայում չի բացառում հանցագործ դառնալու մեծ հավանականությունը: Նրանց մեծ մասն ընտանիք չունեցող, լքված, անապաստան, մուրացկանությամբ զբաղվող կամ բռնության ենթարկված երեխաներ են, որոնց մոտ երբեմն ի հայտ են գալիս վարքագծի շեղումներ:

ՕՀԳ և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոսներն առարկայի դասավանդումն առավել արդյունավետ դարձնելու համար փորձում են մշտապես ապահովել կապը խնամքի հատուկ կենտրոններում գտնվող անչափահասների և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսանողների միջև: Սովորողների ուշադրությունը բևեռվում է այն հանգամանքին, որ ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնն ապաստան է տալիս չափահասության տարիքի չհասած երեխաների, որոնց տրամադրվում են տարբեր ծառայություններ՝ ոստիկանության 24-ժամյա իրավական և շտապ արձագանքման ծառայություն, բուժօգնություն, հոգեբանական աջակցություն, հակասթրեսային թերապիա, «թեժ գիծ» ծառայությանը կապվելու հնարավորություն և այլն: ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնի սաները գործնականորեն համոզվում են ոստիկանության աշխատակիցների՝ տվյալ գործընթացում ունեցած առանցքային դերակատարման մեջ: Գործնական շփումն իրականացնում են կենտրոնի հետ շուրջօրյա ծառայություն անցկացնող՝ ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման վարչության բաժանմունքի ծառայողները: Այդ այցելությունների շրջանակներում կազմակերպվում են նաև համերգային ծրագրեր, որոնցում ընդգրկվում են և այլ հաստատությունների ներկայացուցիչներ: Նախկինում տեղի է ունեցել Ա.Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական դպրոցի սաների և ուսուցիչների համերգային հանդիպումը, որի ժամանակ հանդես են եկել ոչ միայն երաժիշտ երեխաներն ու նրանց ուսուցիչները, այլև այդ ջերմ ելույթներից ոգևորված՝ կենտրոնի սաները, որոնք նախապատրաստել էին իրենց երաժշտական կատարումներն ու հաճելիորեն զարմացրել ոչ միայն երաժիշտներին, այլև իրենց դաստիարակներին:

Երբեմն ՕՀԳ և կրիմինալիստիկայի ամբիոնն է հյուրընկալում երեխաներին՝ ծանոթացնելով կրթահամալիրի պատմությանը, կառուցվածքին, գործառույթներին: Երեխաները, շրջելով տարածքում, ծանոթանում են բանաստեղծներ Ե. Չարենցի, Պ. Սևակի, ինչպես նաև կոմպոզիտոր Ա. Հեքիմյանի հիշատակը հավերժացնող հուշարձաններին, որոնք գտնվում են կրթահամալիրի գողտրիկ պուրակում: Այցելում են նաև զոհված ոստիկանների հուշակոթողին ու ծաղիկներ խոնարհում՝ ի նշան հարգանքի և երախտագիտության: Նրանց ուղեկցում են նաև ՀՀ ոստիկանության պատմության թանգարան, մարզասրահ և ակումբ՝ փորձելով առավել հետաքրքիր և օգտակար դարձնել այդ այցելությունները: Երեխաներն իրենց հուզող հարցերն ու խնդիրները քննարկում են կրթահամալիրի մասնագետների հետ, խորհուրդներ ստանում նրանցից, որոնք շատ կարևոր և նպաստավոր են երկուստեք: Այցի ժամանակ նաև մոմավառություն է կատարվում Սբ Վարդանի մատուռում:

Ջերմ մթնոլորտում անցնող հանդիպումների վերջում ոստիկանության աշխատակիցների և ուսանողների ուղեկցությամբ երեխաները հեռանում են կրթահամալիրից՝ իրենց հետ տանելով հեստավարժ, արժանի ճանապարհ անցած մասնագետների արժեքավոր խորհուրդներ, որոնք ուղենշային են դառնալու իրենց հետագա տարիների համար: Այսօրինակ հանդիպումները, որոնք իրագործվում են ոստիկանության գնդապետներ Մ.Սեմերջյանի, Ա.Սահակյանի, ոստիկանության մայոր Լ.Սարդարյանի և այլոց ջանքերով, մշտապես խրախուսում և մեծ ուշադրության է արժանացնում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Տ. Եսայանը:

Նշենք, որ «Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների պրոֆիլակտիկա» առարկայի պարապմունքները ՕՀԳ և կրիմինալիստիկայի ամբիոնի կողմից կազմակերպելը և տվյալ կենտրոն այցելելը տարիներ շարունակ կրել են պարբերական բնույթ և դարձել ավանդական: Նման պարապմունքներն ավելի հստակ պատկերացում են տալիս ոստիկանության՝ անչափահասների գործերով տեսչության աշխատակիցների գործունեության և պարտականությունների մասին և արդեն իսկ հաստատել են իրենց կենսունակությունն ու կարևորությունը:

**Ալեքսանդր Սահակյան**
***ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի ՕՀԳ և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ***

# ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ

## Տրնդեզ (տերն ընդ ձեզ) կամ Տեառնընդառաջ

Ըստ ավանդության՝ Սիմեոն ծերունին, որը համարվում էր հին կտակարանի յոթանասուներկու թարգմանիչներից մեկը, Եսայու մարգարեության «Ահա կույսը պիտի հղիանա և մի որդի պիտի ծնի» (է 14) տողերը թարգմանելու ժամանակ այն չի գրում՝ մտածելով, որ հեթանոսները չեն հավատա այս խոսքերին: Այդ ժամանակ նրա աչքերին նինջ է իջնում և արթնանալով տեսնում է, որ ոսկե տառերով են գրված մարգարեության այդ տողերը: Աստծո կողմից հրաման է առնում մահ չտեսնել, մինչև որ իր աչքերով չտեսնի Հիսուս փրկչին: Այսպիսով, քառասուն օրերը լրանալուց հետո Մարիամն ու Հովսեփը, վերցնելով մանուկ Հիսուսին, եկան Երուսաղեմ: Եվ տաճարի արևելյան դուռը, որը վաղուց ի վեր փակված էր, ինքնիրեն բացվեց մեծ դղրդյունով: Կատարվեց Եզեկիել մարգարեի այն խոսքը, որ «Այդ դուռը փակ է մնալու ու չի բացվելու, նրանով ոչ ոք չի անցնելու, որպեսզի Իսրայելի Տեր Աստվածը մտնի այնտեղով» (Եզեկ. ԽԴ1): Այս ձայնից քաղաքի բնակիչները դուրս եկան, և քանի որ արդեն մութ էր, վառվող ջահեր ու ճրագներ ձեռքներին՝ գնացին տաճար՝ տեսնելու տաճար եկողին, և միմյանց ձայն տալով՝ ասացին. «Տերն անցավ այս դռնով»: Եվ մտնելով տաճար՝ տեսան Հովսեփին ու Մարիամին՝ Հիսուս մանուկը գրկում:

Այստեղ էր Սիմեոն արդար և բարեպաշտ ծերունին, որը մահ չպիտի տեսներ այնքան, մինչև չտեսներ Փրկչին: Տեսնելով մանուկ Հիսուսին՝ զգում է Փրկչի ներկայությունը և ընդառաջ է ելնում նրան: Այստեղից էլ՝ ‹‹Ելանել ընդ առաջ Տեառն›› արտահայտությունը: Սիմեոն ծերունին իր գիրկն է առնում մանուկին, օրհնում է նրան և ասում. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակի՛ր Քո ծառային՝ ըստ Քո խոսքի»:

Այս օրինակով է նաև, որ մանուկների քառասուն օրը լրանալուն պես մայրը մանկանը տանում է եկեղեցի և քահանայի կողմից մեղքերի թողություն ստանալով՝ իրավունք է ունենում մտնել եկեղեցի, քանի որ վերջանում են կնոջ անմաքրության օրերը: Եվ քահանան, ընծայելով մանկանը Քրիստոսի օրինակով, երկրպագեցնում է սուրբ Խորանին, սուրբ Ավազանին, տաճարի սուրբ Դռանը, պահպանիչ աղոթքով արձակում է մորն ու մանկանը:

Տեառնընդառաջը (Տրնդեզ) Հայ առաքելական եկեղեցու տերունի և անշարժ տոներից է, որը նշվում է Սուրբ ծննդից քառասուն օր հետո՝ փետրվարի 14-ին, իսկ փետրվարի 13-ի երեկոյան կատարվում է նախատոնակ, որի ժամանակ էլ հոգևորականները, զգեստավորված, խաչով և ավետարանով, եկեղեցում երգում են «Այսօր անսկզբնական ծնունդ» շարականը, որի ավարտին էլ հավատավոր ժողովուրդն իր հետ եկեղեցուց օրհնված մոմեր է վառում՝ ի նշանավորում մեր Տեր Հիսուս Քրիստոսին ընդառաջ գնալուն:

Տոնն իր ծագմամբ շատ ավելի հին է, և այն իր նախնական հենքով որոշակի աղերսներ է ունեցել այնպիսի հին աստվածների պաշտամունքի հետ, ինչպիսիք են երազների մեկնիչ և դպրության ու արվեստի պաշտպան Տիրը, կրակի ու արևի աստված Վահագնը: Տեառնընդառաջ տոնը, որը չնայած համարել են հեթանոսական, այնքան է արմատացել, որ եկել հասել է մեր օրեր: Կենցաղում համաժողովրդական այս տոնի ամենատարածված բաղադրիչը ծիսական խարույկի արարողությունն է: Տրնդեզը կրակը (արևը) հողին տալու արարողություն է: Ժողովրդական ասացվածքում կա այսպիսի մի ակնարկ. ‹‹Տերընդեզի կրակը որ գետնին ընկնի, ձյունը կփախչի››: Խարույկը նախ վառում էին եկեղեցիների բակերում, ապա տներում՝ հիմնականում երդիկների վրա. ընդ որում, եկեղեցուց բերված կրակից պիտի վառեին, և այն վառելու պատվավոր իրավունքը վերապահվում էր հիմնականում երիտասարդներին, ու սովորութային օրենքով՝ այն առաջինը վառում էին նոր ամուսնացածները կամ նշանվածները: Խարույկի փայտը կամ այլ վառելիքը բերում էին հենց նշանված կամ նորապսակ երիտասարդները: Տոնին վառվող խարույկը գարնան ավետաբերի խորհրդանշական դերն է կատարում: Չէ որ Տրնդեզը բնության զարթոնքի տոն է: Տրնդեզը կապվում է նաև բերքատվության հետ: Խարույկի մոխիրը թափում էին տան չորս անկյուններում, որ օջախը ‹‹անփորձանք ›› լինի: Մոխիրը կարող էին լցնել կճուճների վրա, որ դրանք միշտ առատ լինեն, հավաբներում, որ հավերը ձվատու լինեն: Մոխիրը շաղ էին տալիս արտերում, տանում էին այգի ու թաղում հողում, որ ծառերը պտղատու լինեն: Տոնի արարողակարգի ամենատարածված և սիրված բաղկացուցիչը թերևս վառված խարույկի շուրջը պտտվելն էր: Իսկ խարույկի շուրջ պտտվում և նրա վրայով ցատկում էին բոլորը, բայց առաջնությունը տրվում էր նորապսակներին: Ծիսական խարույկի մասին ժողովրդական պատկերացումներն ու հավատալիքներն իրոք շատ են: Կրակի վրայով թռչում էին նաև չբեր կանայք, որոնք խանձում էին այդ կրակով իրենց ներքնազգեստի փոքրիկ հատվածը՝ դրանով իսկ ակնկալելով պտղաբերություն. երբեմն էլ այրում էին տղայի գոտին, որ վերջինս բեղմնավոր լիներ, քառասունքը դեռ չլրացած կանայք, որով և համարվում էին քառասունքից դուրս եկած: Տեառնընդառաջի խարույկն ազատում է բոլոր չարիքներից: Տրնդեզի կրակն իր հետ բերում է օդի բարեխառնություն, հունձքի առատություն, արտերի բերրիություն և ամուսինների օրհնություն:

Տեառնընդառաջ տոնը որքան ավանդական, նույնքան և արդիական է:

## ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

1. «Դեժա վյու» (ֆր.՝ Déjà (արդեն)–vu (տեսած)) հոգեբանության մեջ բնութագրվում է որպես ընկալման գործընթացի խախտում, որի դեպքում մարդուն թվում է, թե իբր անցյալում ինքն արդեն գտնվել է նման իրադրության մեջ, որտեղ այժմ նա հայտնվել է: Ինչու՞ են, ըստ հոգեբանների, «դեժա վյու» ապրած մարդիկ հազվադեպ դիմում մասնագետների օգնությանը, ինչի հետևանքով շատ դժվար է լինում արձանագրել «դեժա վյու» վիճակների իրական քանակը:

2. 1976 թվականին բոլորին հայտնի մի արարողության ժամանակ նվագախումբը ղեկավարում էր ամերիկացի կոմպոզիտոր Ջոն Թաուներ Ուիլյամսը: Վերջինս արարողության թեժ պահին կարճ ժամանակով դադարեցրեց խմբավարի իր աշխատանքը, իսկ մի քանի րոպե անց վերադարձավ և շարունակեց ղեկավարել: Ի՞նչը նրան ստիպեց դադարեցնել դիրիժորի աշխատանքը:

3. Ինքնաթիռի սրահում մարդկանց քանակի ռեկորդը սահմանվել է 1991 թվականի մայիսի 24-ին, երբ Եթովպիայի 1086 բնակիչ մեկ ինքնաթիռով տարհանվել է Իսրայել: Ինչպե՞ս է հնարավոր դարձել ընդամենը մի քանի ժամ անց արձանագրել նոր ռեկորդ:

**Պատասխանները**

1. «Դեժա վյու» տերմինը մտել է գիտական գրականություն 1. Ֆրանսերեն է: Ինչպես նշվում է «Օքսֆորդյան անգլերեն բառարանում», դեժա վյուն ունի հոգեբանական բնույթ, դրանում ներգրավված է հիշողությունը, ինչպես նաև զգացողությունը, որ ինչ-որ բան տեսել ենք անցյալում